Խաչվող հասկացություն՝ զարգացում

Ինչո՞ւ էր կարևորվում կրթության զարգացումը: Ի՞նչ դեր էր վերապահվում կրթությանը տարբեր ժամանակաշրջաններում հասարակության զարգացման գործում:

Քո կարծիքով ինչպիսի՞ն պիտի լինի ապագայի դպրոցը:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ռաֆֆի «Խենթը» (Հատված վեպից)

Առավոտ էր: Տներից խումբերով դուրս էին գալիս գյուղական մանուկները, առողջ, զվարթ և մաքուր հագնված: Տղա և աղջիկ, խառն միմյանց հետ, գրքերը ուսներին շալակած, շտապով դիմում էին դպրոցը: Վարդանը նայում էր իրանց վրա և հիանում էր: Որքա՜ն լավ պահված էին այդ սիրուն երեխաները, որքա՜ն ուրախ էին նրանք: Երևի դպրոցը և վարժապետը չեն վախեցնում նրանց: Մի՞թե դրանք այն կիսամերկ և հիվանդոտ երեխաներն էին, որոնց տեսել էր Վարդանը:

Այդ մեր գյուղատնտեսական դպրոցն է,– ասաց Վարդանի հյուրընկալը:– Այն, որ տեսաք առավոտյան, տարրական ուսումնարան էր:

Այս ի՞նչ դպրոց էր, այսպիսի դպրոց Վարդանը երբեք չէր տեսել, թեև ինքն էլ մի ժամանակ վարժապետ էր եղել:

Նա բովանդակում էր իր մեջ գյուղային տնտեսության վերաբերյալ բոլոր պարագայքը: Նրա ահագին շինության առջև տարածված էր ընդարձակ ագարակ՝ զանազան բաժանմունքներով, որ մշակվում էին աշակերտների և աշակերտուհիների ձեռքով: Աշխարհի համարյա բոլոր բույսերի, տունկերի և ծաղիկների տեսակից կային այնտեղ զանազան օրինակներ: :

Ամեն ինչ սովորում էին նրանք բնության հրաշալի գրքի մեջ: Այստեղ որոշյալ ժամերում ուսանողները պարապվում էին մարմնամարզությամբ և զենք գործածելու վարժություններով: <<Ահա այսպիսի դպրոցը կպատրաստե լավ երկրագործ և լավ զինվոր>>,– մտածում էր Վարդանը:

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Զանգվածային անգրագիտության վերացումը և հանրակրթական դպրոցը Խորհրդային Հայաստանում

Հնագույն մշակույթի տեր հայ ժողովուրդը, այնուամենայնիվ, հին կարգերից ստացել էր քիչ ժառանգություն հատկապես գրագիտության բնագավառում: Մասնավորապես՝ համատարած անգրագիտություն էր տիրում գյուղում:

Խորհրդային իշխանությունը գտնում էր, որ նոր հասարակարգի ստեղծումը կարելի է իրականացնել միայն գրագետ մարդկանց միջոցով: Ուստի նա ձեռնամուխ եղավ, մի կողմից, երեխաների դպրոցական կրթության կազմակերպման, մյուս կողմից՝ չափահաս բնակչության անգրագիտության վերացման գործին: 1939 թ. մարդահամարի տվյալներով գրագետ էր դարձել Հայաստանի բնակչության 83,9 տոկոսը՝ 1897 թ. 9,2 տոկոսի դիմաց: Հայաստանում անգրագիտության վերացման խնդիրը հիմնականում լուծված էր, որը շատ մեծ նվաճում էր:

Հայաստանի իշխանությունը իր ձեռքը վերցրեց կրթության ամբողջ գործը և ձեռնամուխ եղավ կրթական նոր համակարգի ստեղծմանը: Առաջին քայլը դպրոցի անջատումն էր եկեղեցուց, կրոնական առարկաների դասավանդման արգելումը, կրթությունը աշխարհիկ դարձնելը:1921 թ. որոշում ընդունվեց հանրապետությունում ունենալ երկաստիճան դպրոց՝ տարրական և յոթնամյա: Մի քանի տարի անց նպատակահարմար համարվեց անցնել եռաստիճան՝ տարրական, յոթնամյա և միջնակարգ դպրոցին:

1920-1930-ական թվականներին հանրակրթական դպրոցների լայն ցանց ստեղծվեց:1940-1941 ուսումնական տարում հանրապետությունում գործում էր 1155 դպրոց: Հարյուրավոր դպրոցական շենքեր կառուցվեցին պետության միջոցներով, որն էլ հոգում էր դպրոցական բոլոր ծախսերը:Հանրակրթական դպրոցների լայն ցանցը մեծ նշանակություն ունեցավ մատաղ սերդի անգրագիտության վերացման գործում:

Աղբյուր՝ Հայոց պատմություն, Նորագույն շրջան, 9-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2014, էջ 85-86: